Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթ ընթացակարգի նախաորակավորման հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

«13» հուլիսի 2023թ.
Ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Հարությունյան - ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ

Անդամներ

Ա. Արամյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ,

Թ. Ղալայան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ,

Ա. Հովակիմյան - ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ,

Գ. Ասլանյան - ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տնտեսական վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ,

Ս. Սահակյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ,

Կ. Գրիգորյան- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի պետ,

Ն. Փահլևանյան - ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ,

Գ. Կարապետյան - «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի գնումների բաժնի պետ,

Լ. Բոյաջյան - «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ:

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ

Ա. Այվազյան - ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պաշտոնական այցերի բաժնի պետի պաշտոնակատար:

1. <u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 15-րդ օրը ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները)

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

	Մասնակցի անվանումը
1.	«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ
2.	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
3.	«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ
4.	«Շարմ Հոլդինգ» ՍՊԸ
5.	«Մոդդ Իվենց» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

1. Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի, «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի և «Մոդդ Իվենց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

2. «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն ներկայացրել է հավելված 1-ն ու հավելված 2-ը, սակայն տնօրենի կողմից հաստատված ներկայացվել է հավելված 1-ը և հավելված 2-ի միայն վերջին էջը. հավելված 2-ով ներկայացվելիք հայտարարությունը հաստատված չէ տնօրենի կողմից,
- Հավելված 2-ով պահանջվել է, որ մասնակիցները ներկայացնեն նախորդ 3 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված պայմանագրերի մասով պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները, սակայն «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից որոշ պայմանագրերի մասով ներկայացվել են միայն պատվիրատուի անվանումները. կապ հաստատելու տվյալներն առկա չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0

4. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի, «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի և «Մոդդ Իվենց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ներկայացված հայտերը գնահատել բավարար:

2. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել՝

- «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հաստատված հավելված 2-ը,
- «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նշված բոլոր պատվիրատուների հետ կապ հաստատելու տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 17-ին ժամը 14:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Արամյան

_____ Թ. Ղալայան

_____ Ա. Հովակիմյան

_____ Գ. Ասլանյան

_____ Ս. Սահակյան

_____ Կ. Գրիգորյան

_____ Ն. Փահլևանյան

_____ Գ. Կարապետյան

_____ Լ. Բոյաջյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան